«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Աստղիկ Մովսիսյան

Ուսումնական հաստատություն՝ Պարտիզակի Ահարոնի անվան միջնակարգ դպրոց

Երևան 2022

Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Հետազոտական աշխատանքս սկսեմ մի փոքր ներածությամբ: Յուրաքանչյուր հայ նորածնի օրորացայինը եղել է համեմված հայրենասիրական երգերով, որովհետև մենք երբեք էլ թշնամիների պակաս չենք ունեցել. Միշտ էլ գտնվել է որևէ ազգ, որին թվացել է թե ինքը իրավունք ունի զենք առնել և արյունով հեղել հայոց հողը: Իսկ էպոսի ընտրությունը պայմանավորված է մեր ժամանակի հրամայականով, որովհետև էպոսը հայրենասիրության և ազգասիրության լավագույն դրսևորումն է:

Սկսենք էպոսից. 8-10-րդ դարերում մեր հողը պարբերաբար հեծել է արաբական զավթիչների լծի տակ: Հայ ժողովուրդը կերտել է իր այն հերոսներին, որոնք ոչ միայն կանգնեցրել են արաբ զավթիչներին, այլև համառ ու տևական պայքարի արդյունքում վերջ դրել արաբական բռնապետությանը: Էպոսը այս բոլորը արտահայտել է բարձր գեղարվեստական արտահայտչությամբ, չնայած որ էպոսում շատ է չափազանցությունը, բայց դա էլ ունի իր բացատրությունը. Քանի որ թշնամին ուժեղ էր, հզոր, մի փոքր չափազանցված ուժի տեր, մի քիչ էլ ծուռ (ծուռը փոխաբերական իմաստով ասված) հերոսները միայն կարող էին հաղթել թշնամուն:

Սասնա ծռեր էպոսը սկիզբ է առել ժողովրդից, ժողովրդի ծոցից են դուրս եկել անհաղթ հերոսները, ժողովուրդն է կերտել իր աննկարագրելի ուժով օժտված հերոսներին, դա միակ ելքն էր երկարատև հայկական հողը զավթած թշնամուց ազատագրելու:

Էպոսը բերնեբերան տարբեր պատումներով հայ գյուղացիներից մեկի շնորհիվ՝ Մշո դաշտի Առնիստ գյուղի բնակիչ Կրպոից առաջին անգամ գրի է առել և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ վերնագրով 1874 թվականին Պոլսում հրատարակել է ականավոր բանահավաք Գարեգին Սրվանձտյանը: Էպոսի հերոսները ծուռ ու խենթ սասունցիներ էին, որոնք ոչնչից և ոչ մի թշնամուց չէին վախենում, նրանց ոչ միայն հաջողվել էր կանգնեցնել արաբ զավթիչներին, այլև բարելավել էին ժողովրդի վիճակը և երկար ժամանակ ազատել հարկային բեռից: Էպոսի հերոսները և մեր նորօրյա հերոսները իրենց հայրենասիրությամբ, անձնվիրությամբ և ազգասիրությամբ չէին զիջում իրար:

Էպոսը բազկացած է չորս ճյուղից՝ Սանասար և Բաղդասար, Մեծ Մհեր, Սասունցի Դավիթ և Փոքր Մհեր: Յուրաքանչյուր ճյուղում՝ յուրաքանչյուր կերպար իր մեջ մարմնավորում է և՛ հայրենասիրություն, և՛ ազգասիրություն, և՛ ազգապահպանության գաղափար, անգամ կանայք իրենց հայրենասիրությամբ և ուժով չեն զիջում տղամարդկանց: Այսօր մեր երկրում այնպիսի մի ժամանակաշրջան է, որ ինչ-որ մեկին ազգասիրության կամ հայրենասիրության դասեր տալու կարիք չկա. Ճիշտ է յուրաքանչյուր հայ պետք է ուղեցույց ունենա էպոսը, բայց այսօրվա մեր նորօրյա հերոսները այնպիսի հայրենասիրության օրինակներ են ցուցաբերում, որ վաղվա սերունդները խոնարհումով և հպարտությամբ կհիշեն նրանց:

Վերադառնանք էպոսին և սկսենք Ծովինարից՝ հայոց Գագիկ արքայի չնաշխարհիկ դստեր գեղեցկությունից արբած Բաղդադի Խալիֆան ցանկանում է կնության առնել Ծովինարին. Մերժման դեպքում սպառնացել են արշավել և ավերել մեր երկիրը: Գագիկ

արքան դեմ էր դստերը կնության տալ Խալիֆային, բայց Ծովինարը ոչ միայն շատ գեղեցիկ էր, այլև՝ խելացի և հայրենասեր, համաձայնվեց կնության գնալ կռապաշտ թագավորին՝ ասելով, որ ավելի լավ է, որ <<միայն ինքը կորսվի, քան Հայաստան երգիրը ավերվի>>: Բայց մինչև հայրենիքից հեռանալը ցանկանում է շրջել հայրենի լեռներում և հանդիպելով մի քարաժայռի ջուր է խմում, էպոսում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ջրի զորությանն ու նշանակությանը, ջրից դուրս բերված ամեն ինչ զորեղ էր և անպարտելի, այդ հավատը միշտ ուղեկցել է սասունցիներին՝ անգամ <<Ռանչպարների կանչում>> ֆիդայապետ Արաբոյի ձին ևս դուրս էր բերվել Սասնո սառնորակ ջրերից. Ջրի հարցում ևս կա չափազանցություն, բայց ես լինելով սասունցի համոզված եմ, որ Սասնա սառնորակ աղբյուրներից ջուր խմած յուրաքանչյուր սասունցի և՛ ուժեղ է, և՛ անվախ, և՛ հայրենասեր, պարզ ու պատվախնդիր: Այդպես է եղել դարեր շարունակ, այդպես է նաև այսօր՝ Ղարաբաղյան շարժումից մինչև այսօր չկա մի մարտ, որտեղ Սասնա արծիվները աննկարագրելի հերոսություն չեն դրսևորում և իրենց ջոկատներով դառնում թշնամու ահ ու սարսափը:

Վերադառնանք Ծովինարին, նա շրջելով հայրենի լեռներում, մոտենալով Կաթնաղբյուրին մի լիքը և մի կիսատ բուռ ջուր է խմում, որից էլ հղիանում է լույս աշխարհ բերելով Սանասարին և Բաղդասարին: Սանասարը խելացի էր, օժտված հզոր ուժով, կապանքներ չհանդուրժող, ազատատենչ, իսկ Բաղդասարը մի քիչ նվազ, խենթ ու խելառ: Բայց նրանց շնորհիվ սկիզբ է դրվում Սասնո աշխարհին և սասունցիներին, շատ չմանրամասնեմ, միայն ասեմ, որ իրենց կյանքը փրկելու համար սպանում են Խալիֆայի ծառաներին, հեռանում են արաբական աշխարհից, մի բարձրադիր տեղում հանդիպում նեղ առվակի և որոշում այստեղ կառուցել իրենց տունը և հենց այստեղ էլ դրսևորվում է նրանց մարդասիրությունը, որովհետև իրենց ահռելի ուժը գործադրում են և տներ են կառուցում նախ իրենց հետ եկած մարդկանց համար նոր միայն իրենց համար, և մի ծերունու խնդրում են անուն տալ իրենց տանը, քանի որ տները կառուցվել էին աժդահա քարերով և կարծես մխրճված լինեին ամպերի մեջ ստիպված էին ծերունուն շալակել և շրջել բերդի շուրջը, և զարմացած ու հիացած ծերունին ասում է թե այսինչ սանսուն քարեր են դրված իրար վրա, այդտեղից էլ հետագայում ծագում է Սասուն անունը:

Նորից եմ կրկնում ազգասիրությունը և հայրենասիրությունը էպոսի յուրաքանչյուր հերոսի էության մեջ է՝ տուն կառուցելու և անուն տալու պահից սկսած Սանասարը և Բաղդասարը իրենց երկրի ու ժողովրդի համար անվերապահորեն պատասխանատվություն են կրում: Սանասարը ամուսնանալով Քառսուն Ճուղ- Ծամ Դեղձունի հետ նվիրվում է իր ազգի բարգավաճմանը ու բարեկեցությանը: Այ դա է ազգասիրությունը՝ գործով ապացուցել և ոչ խոսքով, որն այսօր ցավոք սրտի մենք չենք տեսնում մեզ շրջապատող բազում հայ գործիչների մոտ, որոնք պատասխանատու են ազգի և նրա ճակատագրի համար: Միայն հայրենասիրություն և ազգասիրություն ամպագոռգոռ խոսքեր ենք լսում, բայց երբ պահը գալիս է ապացուցելու ամեն մեկը մի կողմ է փախչում՝ ազգապահպանությունը ու հայրենասիրությունը թողնելով սահմանին առյուծաբար կռվող տասնութ, տասնիննը, քսան տարեկան զինվորին, իսկ նա իր կյանքով, իր թափած արյունով է ապացուցում, որ այո հայրենիքը բարձր ու վեհ է ամեն ինչից՝ և՛ ճառերից, և՛ քաղաքակությունից, և՛ աթոռներից: Հայրենասիրությունը ու ազգասիրությունը մեր արյան մեջ է, մեր հոգու կանչն է և այն ավելի խոր արմատներ ունի, քանզի մեր դյուցազներգության միակ գաղափարը այն է, որով նա հագեցած է՝ հայրենասիրություն, որովհետև հայ ժողովուրդը դարեր շարունակ հերոսական ու

անհավասար կռիվ է մղել իր հայրենիքն ու ազգային արժեքները պահպանելու համար: Ցավոք սրտի այսօր էլ քսանմեկերորդ դարում դեռ հայի կռիվը չի ավարտվել, նորից անհավասար կռիվ է մղում այս արևի տակ իր տեղն ունենալու համար, չնայած որ չունենք հայրենասիրության պակաս, բայց էպոսը մեր հավերժական ուղեկիցն է այս հարցում:

Նորից անրադառնանք Սանասարի կերպարին և հիշենք որ ընդամենը տասնյոթ տարեկան էին Սանասարն ու Բաղդասարը, երբ փախան արաբական աշխարհից, Սանասարը իր ուժով գերադասում էր Բաղդասարին, բայց եղբայրների մոտ առանձնահատուկ ընդգծվում է բարությունն ու ազնվությունը, որը դառնում է մեր ժողովրդի ամբողջ կյանքի ուղեկիցը: Սանասարի մասին խոսելիս ջրի զորության մասին, հետևյալ կարծիքը կա էպոսում, որ Սանասարը սուզվելով ծովի հատակը այնտեղից դուրս է բերում իր հրեղեն ձին՝ Քուռկիկ Ջալալին, Թուր Կեծակին և Խաչ Պատերազմին, այս երեքն էլ կյանքի կեցուցիչն էին, որովհետև դեռ հայկական հին աստվածաբանության մեջ ջուրը կենարար զորության խորհրդանիշ է եղել, այստեղից էլ գալիս է հավատը ջրի մաքրության ու զորության մասին և անգամ հայկական հին առասպելաբանության և քրիստոնեության մեջ մի հետաքրքիր զուգահեռ է անցկացվել, Մարիամ Աստվածածինը Սուրբ Հոգուց հղիանում է ու ծնում Հիսուսին՝ մարդկության փրկչին, իսկ Ծովինարը, որը հայ առասպելաբանության մեջ համարվել է ջրերի աստվածուհի, նույնպես հղիանում է ջրից և լույս աշխարհ բերում Սանասարին ու Բաղդասարին, որոնք դառնում են հայ ժողովրդի փրկիչները հայկական հողից դուրս շպրտելով արաբ զավթիչներին, անգամ այն բարակ առուն, որի մոտ կառուցում են իրենց բերդը, նրանք կոչում են զորավոր.

Էդ ջուր ազնանըցորդու ջուր է,

Ով որ էդոր ական ջուրըն խմե,

Էտպես կըտրիչ կըլնի,

Էնոր մեջքըն գետին տվող չըլի:

Սանասարի և Դեղձուն Ծամի ամուսնությունից ծնվում է մեծ Միհրը, որն էլ իր հայրենասիրությամբ ու ազգասիրությամբ չի զիջում հորը՝ Սանասարին: Միհրն էլ իր ամեն մի քայլը անում է իր ժողովրդի բարորության համար, Միհրը կռվում է նախ սպիտակ դևի դեմ, հաղթում նրան, գերությունից ազատում Արմաղանին և ամուսնանում նրա հետ: Ազատատենչ լինելու գաղափարը էպոսի յուրաքանչյուր հերոսի կարևորագույն հատկանիշներից մեկն է: Մեծ Միհրը նույնպես օժտված էր ահռելի ուժով, դրա վառ ապացույցը, ձեռքով առյուծին ձևելն էր, երբ սասունցիները նրան հայտնում են, որ սասնո ճանապարհին մի հսկա առյուծ է հայտնվել, փակել է ճանապարհը և ահ ու սարսափ է տարածել ամբողջ Սասունում: Մեծ Միհրը առանց երկմտելու, անմիջապես շտապում է օգնել իր ժողովրդին, անզեն հասնելով առյուծին, անմիջապես մեջտեղից ձևում է նրան՝ երկու կես անելով, մին շպրտելով ճանապարհի այս կողմ, մյուսը՝ այն կողմ, այդ օրվանից ստանալով Առյուծաձև Միհր անվանումը: Բայց արաբական աշխարհը իմանալով Սանասարի մահվան մասին և թերագնահատելով Միհրի ուժը անմիջապես պահանջում է, որ Սասունը նորից հարկատու լինի իրեն, բայց Միհրը հրաժարվում է և գնալով Մըսըր կռվում Մելիքի հետ: Սարսափահար Մըսրա Մելիքը տեսնելով Միհրի ուժը հրաժարվում է իր պահանջից և փորձում բարեկամանալ նրա հետ և պայման կապել՝ ով շուտ մեռնի նրա ընտանիքին տիրություն անի մյուսը: Այստեղ էլ ի հայտ է գալիս հայ ժողովրդի մյուս կարևորագույն

հատկանիշը՝ ազնվությունը, այսինքն՝ Մելիքի մահվանից հետո նա մնում է արաբական աշխարհում նրա ընտանիքին տիրություն անելու համար, բայց Մելիքի կինը օգտվում է առիթից հարբեցնում նրան և պահում իր մոտ, նրանց միությունից ծնվում է մի արու զավակ, որը կրում է իր հոր անունը: Մհերը դավաճանում է իր չքնաղ կնոջը և յոթ տարի մնում Մըսրում, նրան ուշքի է բերում Իսմիլ Խաթունի ասած մի խոսքը՝ <<Մըսրա օջախ կանգնեցուցես, հայու օջախ փչացուցես>> այսինքն՝ ամեն անգամ թշնամին այսպիսի մի շառաչուն ապտակ պետք է հասցնի հային, որ նա սթափվի ու չդավաճանի իր երկրին ու ազգին, և Մեծ Մհերը այս խոսքերը լսելուց հետո վերադարձավ հայրենիք. դավաճանված ու լքված Արմաղանը չէր ուզում ներել ամուսնուն, միայն Սասնո տան ճրագը վառ պահելու համար հետ ընդունեց Մեծ Մհերին, որովհետև նախօրեին երազում մի սպիտակամորուս ծերունի, նրան հայտնել էր, որ կծնվի մի արու զավակ Սասնո տունը շարունակող, բայց երբ կլրանա ինը ամիս, ինը օր, և ինը ժամ՝ կմեռնեն և՛ Արմաղանը, և՛ Մեծ Մհերը: Մարգարեությունը կատարվում է, ծնվում է Սասունցի Դավիթը, նույն պահին մեռնում են ծնողները՝ որբ թողնելով նրան, այսինքն՝ Սասնո հերոսների ամեն մի քայլ բխում է միայն ու միայն ազգի շահերից, ազգապահպանության հարցը անգամ սեփական կյանքից վեր են դասել, ունենալ թշնամու լծից ազատ, անկախ հայրենիք, թեկուզ սեփական կյանքի գնով:

Մեր թշնամիները շատ են և ամենուր, մենք այսօր էլ զերծ չենք թշնամու ոտնձգություններից և ամեն քայլ անելուց առաջ, պետք է առաջնորդվենք միայն մեր ազգի շահերից ելնելով, որովհետև մեր թշնամին քնած է, բայց միշտ զգոն և դարանակալած օձի նման հաճախ է գլուխը բնից հանում և խայթում, բայց այսօր մեր աշակերտներին համոզիչ փաստարկներ պետք չեն, քանի որ նրանք իրենց սեփական աչքով են տեսնում թե ինչ է կատարվում մեր հայրենիքի սահմաններին, բայց մեկ է էպոսը արդի է բոլոր ժամանակների համար և իմ կարծիքով յուրաքանչյուր ուսուցչի (մասնագիտությունը կարևոր չէ), պարտքն է իր ժամերին մի քանի րոպե անրադառնալ էպոսին և հայրենասիրության կրակով վառել ապագայում մեր հայրենիքի սահմանները պաշտպանող իրենց սաների հոգիները:

Վերադառնանք Մեծ Մհերի ու Արմաղանի ամուսնությունից ծնված Սասունցի Դավթին, որն իր մեջ մարմնավորում է մեր ազգի ողջ դրական գծերը՝ ազնվություն, մաքրություն, միամտություն, ազգասիրություն, հայրենասիրություն, չափազանցված ուժ, որն ըստ ինձ արդարացված է, որովհետև միայն այդ ուժի շնորհիվ, կարողացան դարեր շարունակ արաբական լծի տակ հեծող հայերը մի փոքր շունչ քաշել, այդ ուժը պետք է ու չի կարող պակասել նաև այսօր, հայ ժողովուրդը իր փրկության դարավոր երազանքը կապում է Սասունցի Դավթի հետ, ահռելի ուժի գաղափարը մեծ տեղ է գրավել այս կերպարում, դա գուցե բնորոշ գիծ է փոքր, բայց շատ թշնամիներ ունեցող ազգին ինչպիսին մենք ենք, եթե նախկինում պատերազմ չտեսած մեր աշակերտներին, փորձում էինք տարբեր երևույթների միջոցով չափազանցությունը ընկալելի դարձնել հիմա բնավ դրա կարիքը չկա: Այսօր դպրոցական պայուսակը աշակերտական սեղաններին թողած այսպիսի ուժով օշտված յուրաքանչյուր հայորդի մեկնում է հայրենիքի սահմանները պաշտպանելու արյունարբու թշնամուց:

Ծնողները կորցրած Դավիթը մեծանում էր ոչ թե տարով, այլ՝ օրով ու ժամով, նա ոչ մի կապանքներ չէր հանդուրժում, հորեղբայր Ձենով Օհանը այլևս չէր կարողանում նրան պահել և ուղարկում է Մըսըր Իսմիլ Խաթունի մոտ: Նա չի ուտում Իսմիլ Խաթունի կաթը, նույնիսկ արաբական աշխարհում նա սնվում է Սասունից ուղարկած մեղր ու կարագով, այսինքն՝ կապանքներ չհանդուրժելու փաստից սկսած մինչև օտար կնոջ

կաթը չուտելը խոսում էին Դավթի կարևորագույն հատկանիշներից մեկի՝ ազատատենչության մասին: Դավիթը արաբական աշխարհում թեև միամտաբար, բայց անընդհատ նեղացնում էր Մըսրա Մելիքին՝ իր խորթ եղբորը, դա դարձավ պատճառ, որպեսզի նա վերադառնա հայրենիք, որովհետև Մելիքը համոզված էր, որ Դավիթը ամեն ինչ դիտավորյալ է անում, և մորն էլ համոզելու համար սև բոլոճներ ու սև չամիչներ է շաղ տալիս, որպեսզի Դավթին ստուգեն, այստեղ հանդիպում ենք ոչ միայն Դավթի այլ նաև մեր ողջ ժողովրդի կարևորագույն հատկանիշներից ևս մեկին՝ միամտությանը: Ցավոք սրտի այս հատկանիշը շատ ակնհայտ է նաև այս օրերին, մենք դեռ միամտաբար հավատում ենք բոլորին, որ մեզ օգնության ձեռք ենք մեկնելու, չնայած որ շատ ենք խաբվել, բայց դեռ հավատը չենք կորցրել:

Ինչ արեց Դավիթը, մտածեց նախ ուտել շարժվող չամիչները որ չփախչեն, որովհետև անշարժները իրենն են: Փոքր ինչ համոզվեց Մըսրա Մելիքը և Դավիթը վերադարձավ հայրենիք: Դավիթին հայրենիքում հորեղբայրը տարբեր աշխատանքներ տվեց, հովիվ, նախրորդ, գառնարած, բայց ոչ մեկից գլուխ չհանեց Դավիթը, միայն արտատեր պառավի շնորհիվ նա իմացավ հոր որսասարի և զենքերի մասին, և ձեռք բերելով այդ ամենը սկսեց հսկել հայրենիքի սահմանները, այսինք մեր հայրենքիը միշտ սահման հասկացողությունը ունեցել է որովհետև երբեք թշնամիների պակաս չենք ունեցել, և այդ սահմանը պետք է միշտ պահպանված լինի: Այսօր այդ սահմանը պետք է ազատել ադրբեջանական զավթիչներից, չնայած որ Սասունցի Դավթի առասպելական ուժով չեն օժտված մեր տղաները, բայց նրանք էլ աննկարագրելի արիության օրինակներ են ցուցաբերում երբ նենգ թշնամին հատուկ իր սովորությանը գաղտագողի և գիշերով թափանցում է մեր սահմանից ներս, յուրաքանչյուր դառնում է մի Սասունցի Դավիթ և փշրում մինչև ատամները զինված թշնամուն, որովհետև թշնամին սպառնում է սեփական հողին, պետականությանն ու անկախությանը մեր: Այստեղ տեղին է հիշել զորավար Վարդան Մամիկոնյանի խոսքերը. <<որ ժողովուրդը այն հեղեղն է, որն իր ճանապարհին կսրբի ամեն խոչընդոտ եթե այն վտանգ է ներկայացնում իր արյամբ ու քրտինքով շաղախված հողին:>> Նենգությունը, գաղտագողի թշնամու վրա հարձակվելը հայկական ձեռագիր չէ, անգամ էպոսում Սասունցի Դավիթը Մըսրա Մելիքի դեմ կռիվ գնալիս զգուշացնում է ու նոր գնում.

Ով քընած է՝ արթու՛ն կացեք,

Ով արթուն է՝ ձիե՛ր կապեք

Ով արթուն է ձիեր թամբեք,

Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,

Ով կապեր է՝ էլե՛ք հեծեք,

Չասեք Դավիթ գող գող եկավ,

Գող գող գնաց:

Զգուշացնելով ու գալով արաբական աշխարհ, Դավիթը նորից բախվում է թշնամու նենգությանը, Դավթի ահռելի ուժին ծանոթ Մըսրա Մելիքը տեսնելով նրան սարսափում է և փորձում է նենգությամբ հաղթել, բարեկամ ձևանալով նետում է նրան քառսուն գազ խոր փորած հորի մեջ ու քառսուն ջաղձի քար դնում վրան՝ ուրախանալով, որ գնաց կորավ Դավիթը, բայց հորեղբայր Ձենով Օհանի երազը փրկում է Դավթին: Ձենով Օհանը տեսնում է որ Մըսրա աստղը շողշողում է Սասնո

աստղը խամրում է, և բարձրանալով Սասնո սարերից մեկի վրա յոթ գոմշի կաշի իրեն փաթած, որ իր ձայնի զորությունից չպատռվեր կանչում է Դավթին, որ հիշի Խաչ Պատերազմին իր աջ բազկին և դուրս գա նեղությունից: Անգամ կռվի ժամանակ էլ հայը ազնիվ է կռվում, իսկ թշնամին խարդախ ու դավադիր: Մըսրա Մելիքի զորքին հաղթելուց հետո նա ոչ թե ոչնչացնում է զորքին այլ պարտված կողմին խաղաղ ու հանգիստ ապրելու կոչ է անում:

Էլեք գնացեք ու ձեր տներ նստեք...

Հանդարտ կացեք, մեկ էլ չելնեք ու գաք վեր Սասնա:

Մեկ էլ որ զենք առնեք մեր դեմ,

Կելնի ձեր դեմ Սասնա Դավիթ, Թուր Կեծակին:

Այս մի քանի տողում ու ամբողջ էպոսը ներառյալ ողողված է մի կարևորագույն հատկանիշով, երևի թե միայն հային բնորոշ ազնվությամբ, մի հատկանիշ, որը հաճախ է խանգարել և հիմա էլ խանգարում է ճիշտ կողմնորոշվել: Ոչ միայն էպոսում այլև պատմության մեջ հաճախ ենք հանդիպում հայի ազնվության տարբեր դրսևորումների, հիշենք Արշակունյաց գահակալության ժամանակաշրջանում, երբ Պարսից Շապուհ արքան հայ կանանց մերկանդամ հայ կանանց ցցի է հանում, բայց ընդամենը մի քանի օր հետո սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը պարսկական զորքը խայտառակ պարտության մատնելուց հետո Շապուհի կանանոցը տիկնանց տիկնոջ հետ, հետ է վերադարձնում, բայց մեկ է մենք հայերս պատմությունից դասեր չենք քաղում, մնում ենք երբեմն նույն անհեթեթ ազնիվները և երբեմն ոչ տեղին են մեր ազնվության դրսևորումները և այսօր էլ, երբ թշնամին նույն բարբարոսությամբ է վարվում մեզ հետ միգուցե որպես մասնագետ իրավունք չունեմ նման արտահայտություն անելու, բայց երևի այսօր վերջապես պետք է դադարեցնենք մեր սերուդների մեջ ազնվություն դաստրակելը: Կարող ես ազնիվ լինել այնտեղ, որտեղ գնահատվում է այդ ազնվությունը, բայց անազնիվի նկատմամբ քո ազնիվ լինելը պարզապես կործանարար է, իսկ մեր թշնամիները միշտ անազնիվ են վարվել մեզ հետ, Սասունցի Դավթի կերպարում անգամ մենամարտի կերպարում անգամ մենամարտի կանոնները չհարգող Մըսրա Մելիքի հետ Սասունցի Դավիթը ազնիվ է վարվում: Մըսրա Մելիքին ոչ միայն առաջին զարկը տալու իրավունքն է բաշխում այլ նաև երկրորդ և երրորդ զարկերը նրա մորն ու քրոջը, իսկ Մըսրա Մելիքը որևէ հարցում ազնիվ չէր Դավթի հետ: Այստեղ մի կարևոր հատկանիշ ևս կար, եթե թշնամին համարձակվի նորից զենք առնել հայ ժողովրդի դեմ նրանք պատրաստ են մի բռունցք դառնալ ու վերջին հարվածը հասցնել թշնամուն: Հայ ժողովրդի այս կարևորագույն հատկանիշը էպոսի բոլոր ճյուղերում ու կերպարների մոտ նկատվում է, որը ցավոք սրտի չենք տեսնում այս օրհասական օրերին, մեր պատմության բոլոր շրջափուլերում չնայած զերծ չենք եղել դավաճաններից, բայց այդ մի հատկանիշով միշտ առանձնացվել ենք ու հպարտացել, որ երբ թշնամին սպառնացել է մեր հայրենի հողին, պետականությանն ու անկախությանը, մենք մի կողմ ենք թողել մեր բոլոր տարաձայնությունները և մի բռունցք դարձած տվել վերջնական ու ջախջախիչ հարվածը: Մենք երբեք այսքան բզկտված ու անմիաբան չենք եղել, երբ քաջ գիտակցում ենք, որ սահմաններին զոհվում են բազում առյուծասիրտ զինվորներ, թշնամին քիչ քիչ մխրճվում է մեր հայրենիք խորքերը, բայց մենք ինչ որ քաղաքական տարաձայնություններ ունենք և դեռ չենք դարձել մի բռունցք, որ թշնամուն իր տեղը ցույց տանք: Բայց դա ամբողջ ազգիս մասին չէ, որովհետև նույն այդ զինվորները սահմանին այնպիսի

հայրենասիրության օրինակներ են ցուցաբերում, որ ամբողջ անտարբեր աշխարհին են զարմացնում: Նույն ցավն է, նույն կորուստները, նույն վտանգը Դամոկլյան սրի պես մեր գլխին կախված և նույն ամբողջ աշխարհի անտարբերությունը այն էլ քաներրորդ դարում, թշնամու ձեռագիրը հազարավոր տարիներ հետո անգամ չի փոխվել, նրանք սպանում են մեր խաղաղ բնակիչներին, գնդակահարում մեր գերիներին, իսկ մենք ապահով պահելով նրանց գերիներին հետ ենք վերադարձնում: Դավթի ահռելի ուժը նույնիսկ ամենավաղ տարիքում է երևան գալիս, երբ արաբ հարկահանները հերթական անգամ արշավել էին Հայաստան և ոչ միայն հարկ էին տանում այլև ուզում էին որ Սասունցի Դավիթը հնազանդվի և չխոչընդոտի իրենց քայլերին անցնելով Մըսրա Մելիքի թրի տակով, բայց Դավիթը ոչ միայն չի ենթարկվում այլ երբ թափ է տալիս նրանց ճկույթը կպչում է ապառաժ քարին, ապառաժ քարից կրակ է թռչում, կամ մի ուրիշ դրվագում հարկահանները ոչ միայն չեն կարողանում հարկ տանել Սասունից այլ առանց հետ նայելու փաղչում են Հայաստանից, էպոսում ասվում է.

Էկան քըց կել կազան,

Կածին քըց շուն վազան:

Անվերջ կարելի է խոսել հայ ժողովրդի բոլոր դրական հատկանիշները մարմնավորող կերպարի մասին, որին անսահման սիրում էին սասունցիները, որբ մնացած Դավթին մայրություն էին անում սասնո բոլոր մայրերը, իսկ քրոջական սեր ու գորովանք տվել են սասնո բոլոր քույրերը, և կռիվ գնալուց առաջ Դավիթը կարծես միշտ նրանց օրհնությանն էր սպասում և համոզված էր որ այն իրեն հաջողություն կբերի.

Ախպերնե՛ր, քուրե՛ր, դուք մի՛ վախենաք,

Աստծու կամքով կերթամ ես կռիվ,

Օ՛ քուրե՛ր, դուք կածե՛ք բարով,

Դուք ինձի քուրություն եք արել,

Օ՛, մերեր, դուք կածե՛ք բարով,

Դուք ինձի մերություն եք արել,

Բարի՛ դրկիցներ, դուք կածե՛ք բարով,

Դուք կածե՛ք բարով մեծ ու պստիկով,

Ջահելնե՛ր, դուք է՛լ, ինչ քեֆ էլ կանեք,

Դավթի անուն հիշեցեք:

Էպոսի հարյուրհիսուն պատումներում քանի որ պատմվել է ժողովրդի կողմից և բերնեբերան է հասել մեզ մինչև տպագրվելը կան դեպքերի ու դեմքերի որոշակի տարբերություններ, բայց քաջության, հայրենասիրության և ազգապահպանության գաղափարները մշտական ուղեկիցներն են էպոսի բոլոր հերոսների և երևի թե էպոսը ունենալով մեզ ուղեկից այսօր էլ այդ երեք գաղափարներով զինված են մեր հերոսները: Հայոց մայրերը կարծես ի վերուստ են դատապարտված մշտապես Դավիթներ ծնելու, որովհետև մեր թշնամիները երբեք չեն պակասում, այսօր էլ արաբներին փոխարինել են թուրքերը և մենք նույն մարտահրավերների առաջ ենք կանգնած, սիրված հերոս Սասունցի Դավթի կերպարը իր չափազանցված ուժով թևեր

է տալիս սահմանին կանգնած մեր հերոսներին, չնայած չափազանցությունը մեծ տեղ էր գրավում Սասունցի Դավթի կերպարում, բայց ես երբեք չեմ հանդիպել մի դեպքի, երբ դժվարացել եմ բացատրել այս չափազանցության իմաստը և կասկածի տեղիք տվել աշակերտների մոտ: Դավթի ախոյանը Մըսրա Մելիքն է նրա հակապատկերը, նենգ, դավադիր ու խարդախ և եթե Դավթի ուժը չգերազանցեր Մելիքի ուժին դժվար կլիներ հաղթեր նման նենգ թշնամու, այսօր էլ մեր սահմանին կանգնած յուրաքանչյուր զինվորի թշնամին նույնքան նենգ ու դավադիր է ինչքան Մըսրա Մելիքը և միայն ուժով նրանց հաղթելը շատ դժվար կլինի, մեր տղաները պետք է նաև խորամանկ լինեն:

Սասունցի Դավիթը ամուսնանում է գեղեցկուհի Խանդութ Խնումի հետ, ունենում մեկ արու զավակ Փոքր Միհրը, չնայած որ Ձենով Հովանը առանց Դավթի կամքը հարցնելու նրան արդեն նշանել էր Չմշկիկ Սուլթանի հետ, բայց Դավթի քաջությանը սիրահարված էր Կապուտ Կողի թագավորի դուստրը, Խանդութ Խանումը և Դավիթը դեմ գնալով հորեղբոր կամքին բազմաթիվ դժվարություններ հաղթահարելուց հետո Խանդութի հետ ամուսնանում է և տանում նրան Սասուն: Ամեն մի աննշան թվացող արտահայտության մեջ ժողովուրդը տեսել է մի կարևորագույն հատկանիշ, որը բնորոշ էր ողջ ժողովրդին, Դավթի ինչ որ մեկին չհնազանդվելը, կամ բազմաթիվ դժվարություններ հաղթահարելը հենց մեր ժողովրդին բնորոշ հատկանիշներ են, որն էլ հայ ժողովրդին ուղեկցել է դարեր շարունակ: Դավիթը երկար չի մնում Սասունում, այստեղ թողնում է նորածին որդուն ու կնոջը և վերադառնում Գյուրջիստան, տարիներ հետո արդեն մեծացած որդին փորձում է գտնել հորը և ճանապարհին հանդիպելով և չճանաչելով նրան, կռվի է բռնվում նրա հետ, ու հանկարծ երբ Դավիթը ճանաչում է որդուն իր դեմ կռվելու համար անիծում է նրան ասելով. <<անմահ ըլնիս անժառանգ>>: Դավիթը սպանվում է Չըմըշկիկ Սուլթանից ծնված սեփական դստեր թունավոր նետով, իսկ երբ Խանդութ Խաթունը լսում է Դավթի մահվան բոթը իրեն ցած է նետում բերդի կատարից ու մեռնում:

Խոսենք վերջին ճյուղի, Փոքր Միհրի մասին, Ձենով Հովանն ու Քեռի Թորոսը, գնում են Կապուտ Կող, որ Միհրին բերեն Սասուն, որովհետև նա վերջին շավիղն էր, որ պետք է տեր կենար Ջոջանց տան: Չնայած որ Փոքր Միհրը չի արդարացնում սասունցիների սպասումները, բայց ժողովուրդը էպոսում սու քննադատության չի ենթարկում նրան: Առհասարակ հայ իրականության մեջ երկու հայր է եղել, որ անիծել են իրենց զավակներին, մեկը Արտաշես արքան անիծելով Արտավազդին ասելով, որ անժառանգ մնա, մյուսը Սասունցի Դավիթը՝ Փոքր Միհրին դարձյալ որ անժառանգ մնա և հայրական անեծքները իրականություն են դարձել: Փոքր Միհրը ամուսնանում է Պաճիկ թագավորի գեղեցկուհի դուստր Գոհարի հետ, բայց նրանք անժառանգ են մնում: Էպոսի տարբեր պատումներում Միհրի մասին կարծիքները տարբեր են, բայց հայրենասիրության ու ազգասիրության գաղափարով տոգորված չէ այս կերպարը, բայց պատումներից մեկում ասվում է իբր անարդար աշխարհի վրա այլևս չէր կարողանում ապրեր փոքր Միհրը և դրա համար գնաց ու փակվեց Վանա սարի մոտ գտնվող մի հսկայական քարայրում, դուռն էլ կոչվում էր ագռավաքար, մեկ ուրիշ պատումում էլ, որ հայոց հողը այլևս չէր դիմանում Փոքր Միհրի ծանրությանը: Հովհաննես Թումանյանի մշակման մեջ ևս Միհրը վերջնական փակվում է ագռավաքարում և այդ քարը տարվա մեջ երկու անգամ է բացվում՝ մեկ անգամ Վարդավառին, մյուս անգամ Համբարձմանը, և Համբարձման գիշերը մի հովիվ է հայտնվում քարի առաջ և հարցնում թե երբ դուրս կգա Փոքր Միհրը նրա պատասխանը հետևյալն էր ըստ էպոսի.

Երբ աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի,

Երբ որ ցորենն եղավ քանց մասուր մի,

Ու գարին եղավ քանց ընկուզ մի:

Այսպես էլ քարը փակվում է և Փոքր Միերը այնտեղից դուրս չի գալիս: Փոքր Միերի ագռավաքարում փակվելուց հետո և անժառանգ լինելու պատճառով վերջ է դրվում սասունցիների վերջին սերնդին:

Բացի գլխավոր հերոսներից խոսենք նաև էպոսում եղած այլ կերպարների մասին, որոնք իրենց հայրենասիրությամբ ու ազգասիրությամբ հետ չէին մնում գլխավոր հերոսներից: Զոնով Հովանը ծայրահեղ զգուշավոր էր, իրականությանը համակերպվող, կասկածամիտ, բայց հայրենասեր և պատվախնդիր և երբ պետք էր լինում ամենավճռական պահին ճիշտ որոշումներ էր կայացնում ու կարշես Դավթի պահապան հրեշտակը լիներ, անմիջապես զգում էր թե երբ է Դավիթը գտնվում վտանգի մեջ, և հասնում օգնության, խորհուրդ տալով նրան ամեն անգամ ծանր իրավիճակներում հայտնվելու դեպքում հիշել Խաչ Պատերազմին վըր աջ բազկին և դուրս գալ ստեղծված ծանր վիճակից, կամ Սասնո սերունդը շարունակելու համար նա պատրաստ էր հաղթահարել բազմաթիվ դժվարություններ, հասնել Կապուտ Կող և Սասուն բերել վերջին ժառանգին:

Շատ հետաքրքիր անձնավորություն էր նաև Քեռի Թորոսը, նա էլ հանուն Հայրենիքի պատրաստ էր զոհաբերել անգամ սեփական անձը և միշտ իր բարի խորհուրդներով օգնության էր հասնում Սասնա ծռերին:

Խոսելով էպոսի մասին ուզում եմ առանձնահատուկ տեղ հատկացնել կին հերոսներին և մի փոքր անրադարձ կատարեմ անցյալից, հիշելով Եղիշեի խոսքը՝ <<Տիկնայք փափկասուն հայոց աշխարհի>>: Մի պահ թողենք էպոսը և հետ գնանք մեր թվարկությունից առաջ չորսհարյուրհիսունմեկ թվական, երբ թշնամին նորից սպառնում էր մեր գոյությանը այս անգամ մեր թշնամին պարսիկներն էին և կշռաքարի երկու նժարներին դրված էր հայոց լինել չլինելիության հարցը, և հայ կանայք իրենց տղամարդկանց կողքին էին, լծվել էին ազգապահանության վեհ գործին և իրենց քաջությամբ, համարձակությամբ, հայրենասիրությամբ և խելացիությամբ հետ չեն մնացել իրենց սիրելի տղամարդկանցից: Իշխանական տոհմի կանայք մոռացած իրենց փափկասուն կյանքը ոտաբոբիկ հայ գեղջուկ կանանց հետ հասնում են Ավարայրի դաշտ որ իրենց ներկայությամբ ոգևորեն կռվող տղամարդկանց:

Այսօր ևս և քառասուչորս օրյա պատերազմի օրերին և հենց այս պահին մեր սահմաններին, մեր կորյուններ ծնած մայրերը զենք առած իրենց զավակների հետ կողք կողքի արիաբար մարտնչում են՝ իրենց կրծքով փակելով որդիներին ուղղված փամփուշտները: Հիմա էպոսից, սկսենք էպոսի գլխավոր կին կերպարից չքնաղ Ծովինարից, շատ գեղեցիկ հմայիչ Ծովինարը ուժեղ էր հայրենասեր ու խելացի, հանուն հայրենիքի զոհում է իրեն ամուսնանալով Բաղդադի Խալիֆի հետ և օտար հողում ծնված զավակներին դաստիրակել իսկական հայրենասեր հայ: Արմաղանը հանուն հայրենիքի գոյության ներում է իրեն լքած և դավաճանած ամուսնուն, երբ սպիտակամորուս մի ծերունի նրան խորհուրդ է տալիս ընդունել հետ վերադարձած ամուսնուն, որ շարունակվի Սասնո տունը, իսկ Խանդութ Խաթունի ասած խոսքը, դարձել է թևավոր և այսօր էլ առաջնորդում է մեր կանանց. <<Առյուծն, առյուծ է, էգ էղնի թե որձ>>: Հերոսների կանանց մասին խոսելուց բացի մի հետաքրքիր կին

կերպար ևս կա էպոսում՝ արտատեր պառավը, այս գեղջուկ կինը անսհաման բարության, ազնվության, աշխատասիրության և ինչու ոչ նաև հայրենասիրության մարմնացում էր, նա է խորհուրդ տալիս Սասունցի Դավթին, որ գնա ու տեր կանգնի իր որսասարին և հորեղբորից իմանա հոր զենք ու զրահի տեղը, որպեսզի պաշտպանի հայրենի հողը արաբական զավթիչներից:

Ուզում եմ խոսել նաև այն մասին, որը նաև նոր ժամանակակից կրթության հիմնախնդիրներից մեկն է, թե ինչ մեթոդներ պետք է կիրառել Սասնա ծռեր էպոսը ուսուցանելիս, չնայած այսօրվա Հայաստանում դրանց կարիքը չեմ էլ տեսնում, որովհետև ինչպես սկզբում ասացի մեր թշնամիները, երբեք էլ չեն պակասել և հայրենասիրությունը և ազգապահպանությունը այսօր էլ մեր ժամանակի հրամայականն է, էպոսը միշտ արդի է, որովհետև այսօր էլ Դավիթների կողքին կռվում են Նարեկներ, Գոռեր, Արմեններ և իրենց կյանքը չեն խնայում, որ հավերժ ապրեն հայն ու Հայաստանը, որ երբեք իրականություն չդառնա թշնամու դարավոր երազանքը՝ այսինք քարտեզից ջնջվի Հայաստան անունը: Բայց նորից անրադառնամ էպոսին և պատմեմ մի իրական դեպք, տարիներ առաջ, երբ նոր էի աշխատում ու չկային այս ժամանակակից հնարքները այսինքն տարբեր մեթոդներ, տեսաֆիլմեր, նույնիսկ զանազան նկարներ ու քանդակներ հայ աշակերտներին, ազգապահպանության գաղափարով դաստիրակելու համար ուսուցչից շատ ջանք չէր պահանջվում և պատմեմ այդ իրական դեպքի մասին, տարիներ առաջ մի աշակերտ ունեի Նարեկ անունով, երբ Թումանյանի մշակումն էինք անցնում նա շատ ոգևորված էր ամբողջ էությամբ կլանված լսում էր ինձ, շատ անհանգիստ և ամբողջ քառասունհինգ րոպեի ընթացքում նրա աչքերը փայլում էին և մի տեսակ խորամանկ ժպիտով հեռացավ դասարանից, առավոտյան, երբ մտա դասարան նա դռան մոր ձեռքին մի փայտե թուր ինձ էր սպասում, անմիջապես մոտեցավ ինձ թուրը պարզած ու հուզված ասաց. –ընկեր Մովսիսյան ես էս թրով պիտի սպանեմ Մըսրա Մելիքին, որ մեկ էլ չգա Հայաստան ու ավերի մեր երկիրը: Ու ես հասկացա, որ իմ ասած յուրաքանչյուր բառը տեղ է հասել ու նաև հասկացա, որ հայը անգամ փայտե թրով կարող է կռվել ու հաղթել թշնամուն, որովհետև նրա կռիվը արդար է, նա կռվում է միայն երբ իրեն ստիպում են կռվել և կռվում է իր հայրենիքի իր հողի, իր ազգի գոյությունը պահպանելու համար, մեր Գոյի պայքարը, երբեք էլ չի դադարել ու չի դադարում, մեր թշնամիները հիմա էլ ստիպում են մեզ ամեն վարկյան զգոն լինել:

Պարզապես նկարների, ֆիլմերի կամ ինչ որ մեթոդների կիրառմամբ, հայրենասիրություն չեն սերմանում, այն ամեն հայի մեջ է, էպոսի ամեն տողում, ամեն հերոս լի է հայրենասիրությամբ, ազգասիրությամբ, ու այս գաղափարով սնված հայ աշակերտը, այսօր հասցնում է ընդամենը պայուսակը թողնել աշակերտական սեղանին ու կանգնել հայոց սահմանին, հայոց հողը նորից արյունով է հեղվում, այս անգամ մեր իրական թշնամին թուրք բարբարոսը նորից է փորձում իրականացնել հայոց ցեղասպանություն և մեր անվախ ու քաջարի զինվորները հայրենասիրությամբ տոչորված պաշտպանում են հայոց հողը արյունարբու թշնամուց:

Սահմանին կանգնած կյանքը դեռ չտեսած ու չվայելած այդ պատանիներն են իսկական հայեր, որոնք բարձր են ամեն քաղաքական շահարկումներից, ընդամենը յոթ ութ զինվորով կարող են կանգնեցնել թշնամու վարձկաններին և թույլ չտալ թափանցել Հայաստանի խորքը, Սասունցի Դավիթը այդ տեսակ հայի խորհրդանիշն է, մինչ այս վերջին օրերի դեպքերը այլ կերպ էի ուզում գրել իմ հետազոտականը, բայց հայի ճակատագիրը, ինձ ստիպեց մի փոքր փոխել այն և նորից էպոսը դարձնել միակ

ուղեցույցը, որովհետև բոլոր ժամանակներում էպոսում հայրենասիրությունը չի պակասում և այն պետք է մեր սահմանին կանգնած զինվորներին, որ անգամ Դավթի չափազանցությունը նրանց ոչ միայն խրախուսի այլև օգնի չվախենալ մինչև ատամները զինված թշնամուց: Երբ հայրենիքդ վտանգի մեջ է, պետք է մոռանալ ամեն տարաձայնություն, մոռանալ ներքին խմորումները, մի բռունցք դառնալ ու միայն հայրենիքի փրկության մասին մտածել, որովհետև անհայրենիք մարդը ոչ մեկի ու ոչ մի բանի պետք չէ, ամեն ինչից վեր պետք է հայրենիքը լինի և ամեն զինվոր մի գաղափարով պետք է սնվի, շատ հեռու շպրտի մեր հայրենիքի սահմաններին բուն դրած վաղեմի թշնամուն: Միգուցե այսօր էլ պետք է չափազանցությամբ առաջնորդվել, ինչպես էպոսում, որովհետև թշնամին շատ է, ուժեղ ու զինված, բայց դա չպետք է վախեցնի մեր քաջերին, որովհետև մեր կռիվը արդար է ու ազնիվ, այն մղվում է մեր հողի ու մեր գոյության համար:

Մենք միշտ էլ հպարտացել ենք մեր հայ լինելով, հայի առանձնահատուկ տեսակով, որովհետև հայը ունի մի շարք հատկություններ որից զերծ են շատ ազգեր: Միշտ էպոսը ուսումնասիրելով, ինձ թվացել է որ այդ բոլոր հատկանիշները հենց էպոսից ենք ժառանգել: Մենք՝ հայերս կարծես ի վերուստ ծնված լինենք հայրենասեր, որովհետև դա հայի ճակատագիր է, երբ միշտ ապրում ես սպառնալիքի տակ, պետք է ինքնաբերաբար ձեռք բերես ինքնապաշտպանվելու հատկություն, պատմությունը մեզ միշտ ճիշտ դասեր է տվել, չկա պատմության մի այնպիսի շրջափուլ, որ հայը պարքարած չլինի իր գոյության համար, զենքով ձեռք բերած չլինի այս արևի տակ լինելու իր իրավունքը, անգամ այն ժամանակ, երբ հզոր արքաներ ենք ունեցել, էլի հաճախ մեզ սպառնացել է, որևէ ազգի հետ ձուլվելու վտանգը, բայց ամենա անելանելի ճակատագրական պահին հայը սթափվել է մի կողմ թողել ամեն ինչ և դաս տալով իր բոլոր թշնամիներին՝ ապրել, գոյատևել և հասել այսօր: Մեր ամենաոխերիմ թշնամին՝ թուրքը կարծես, երբեք չի ուզում հանդարտվել, երբ քսաներրորդ դարի սկզբներին իր ցեղասպան քաղաքականությամբ որոշեց. (Թողնել մեկ հայ և այն էլ՝ թանգարանում:) Մեզ նորից բախտ էր վիճակված պայքարել ու գոյատևել, թուրք բարբարոսները խլել էին հայ գյուղացու անգամ հաց կտրելու միակ դանակը, նրան զրկել էին պաշտպանվելու բոլոր միջոցներից, բայց հայի անկոտրում ոգին, նորից արթնանում ու անում է անհնարինը, ավերվում են հայկական ծաղկուն քաղաքներ ու գյուղեր, սպանվում ու մորթվում են հազարավոր ծերեր ու մանուկներ, պաշտպանվելու հնարավորությունից զրկված հայը սեփական երկրի քարերով է սկսում պաշտպանել իրեն, հայի այս տեսակի մասին է երազել ու կերտել ժողովուրդը Սասունցի Դավիթ էպոսում, այս տեսակի մասին ենք երազում նաև այսօր, այս տեսակը չպետք է պակասի ոչ մի րոպե. Սեփական կյանքը հայրենիքից վեր չդասող, անձնուրաց հայեր են մեզ պետք, որոնք ծնված օրվանից պետք է զինվորագրվեն հայրենիքի փրկության գործին, նրա տունը բաց դաշտն է, նրա ընկերը զենքը և հայի այդ տեսակը հայտնվում է ճիշտ ժամանակին, այստեղ ուզում եմ հիշել Խաչիկ Դաշտենցի Ռանչպարների կանչից մի դրվագ, մի խումբ ֆիդայիններ շրջում էին Արևմտյան Հայաստանի տարբեր տարածքներում, որ փրկեն արևմտահայության վերջին պատառիկները, Խաչիկ Դաշտենցը նրանց անվանում էր <<հայոց սածիլները հավաքողներ>>, որոնք փրկում ու տանում էին Արևելյան Հայաստանում սածիլելու: Այդ անձնազոհ հայի տեսակի շարունակեց գոյատևել արևմտահայությունը, ինչպես ժամանակին արեցին էպոսի հերոսները, Սանասարն ու Բաղդասարը, այո նրանց հաջողվեց, ցեղասպանված միլիոն ու կես անթաղ դիեր թողած, թուրքական բարբարություններից մազապուրծ եղած հայերի <<սածիլները>> այսօր ապրում են և բազմանում: Երևի դա է պատճառը, որ

այսօր էլ մեր սահմաններին շատ են սասունցիները, եղեռնազարկված, տեղահանված սասունցին չի ուզում, որ իր ճակատագրին, որևէ ուրիշ հայ արժանանա:

Արցախյան բոլոր ազատագրական հերոսամարտերի ժամանակ, հայը անհուսալի ծանր վիճակում է հայտնվել, սեփական տունն ու հայրենիքը կորցնելու միտքը միշտ նրան զգոն է պահել և նա նորից է կռվել ոչինչ չունենալով, երբ նոր էր սկսվել ղարաբաղյան շարժումը մեր տղաները շատ քիչ զենք են ունեցել, բայց հայրենիքը պաշտպանելու, սեփական հողում ազատ ու անկախ ապրելու գաղափարը նորից մղել է պայքարի ու հաղթանակի: Հիշում եմ այդ տարիները, երբ դեռ առաջին կուրսի ուսանողուհի էի՝ մի կողմից պատերազմը մյուս կողմից երկրաշարժը նորից քաոս էին ստեղծել մեր երկրում, բայց մեր ժողովուրդը այդպիսի ծանր իրավիճակի ժամանակ գտնում է ելքը և պայքարում մինչև վերջ, այդ օրերին մի արցախցի դասախոս ունեինք և նրա խոսքը մինչև հիմա ականջներիս է. <<Արցախը Հայաստանի բանալին է, Արցախը Հայաստանը ապահովող թիկունք-բերդն է, եթե ընկնի Արցախը թուրքերի ախորժակը կբացվի, նրանք կգան նաև Հայաստանի հետևից>> այն ժամանակ գուցե շատ երիտասարդ էի, և նրա խոսքերը մի փոքր չափազանցված էի համարում, իսկ հիմա ակնհայտ է, որ հիմա թուրքերն իրենց թաթն ուզում են դնել Հայաստանի մայրաքաղաք Երևանի վրա:

Էպոսի հերոսները ընդամենը մի թուր կեծակի ունեին, բայց կարողանում էին ոչ միայն կանգնեցնել այլև հաղթել թշնամուն, Արցախցին նույնպես սովորական զենքով կարողացավ հաղթել թշնամուն, բայց մենք ունեցել ենք չափազանցությունների կարիք, քանի որ մեր թշնամին շատ խորամանկ ու ուժեղ էր ստիպում էր մեր հերոսներին դառնալ հնարամիտ ու ոչ միայն իրենց կյանքը փրկել այլ նաև հարենիքը, երբ արաբ վերակացուները տանում են Սանասարին և Բաղդասարին սպանելու նրանք իրենց հնարամտության շնորհիվ կարողանում են փաղչել արաբական երկրից և ոչ միայն հիմքը դնել Սասնա տան այլև կերտել մի ամբողջ հերոսական ժողովրդի ապագան: Կամ երբ Սասունցի Դավիթը դառնում է Մըսրա Մելիքի խաբեության զոհը և հայտնվում խոր փոսում, նրան էլ այդ ծանր վիճակից դուրս է բերում հորեղբոր հնարամտությունը ու բազմաթիվ այսպիսի օրհասական պահերի ականատես է եղել մեր ժողովուրդը, բայց չհուսահատվելը միայն զենքով հայրենիքը պաշտպանելու գաղափարը միշտ էլ նրան հաջողություն են բերել, այսօր այս ճակատագրական պահին նորից հայրենիքը վտանգված է կանգնած ենք տարածքային ամբողջականությունը և մեր պետականությունը կորցնելու վտանգի առաջ, սահմանին կանգնած մեր տղաների երակներում Դավթի արյունն է հոսում և իրենց կյանքի գնով պահում են հայրենի հողի ամեն մի թիզը: Չնայած որ մեր եկրում ներքաղաքական իրավիճակը շատ բարդ է, բայց մեր տղաները զինված են լոկ մի գաղափարով կա թշնամի և պետք է հաղթել, թշնամին ինչքան էլ զինված լինի, ինչքան էլ ուժեղ, բայց չի կարող հաղթել հայի անկոտրում ոգին, նա կարող է հաղթել մեզ միայն այն դեպքում, երբ հասկանում է որ ներսից մենք ինքներս մեզ հոշոտում ենք և ես չեմ կարող չանրադառնալ պատմական անցյալին, երբ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը սկուտեղի վրա Անի բերդաքաղաքի բանալիները հանձնում է թշնամուն և դավաճանության արդյունքում թշնամուն հաջողվում է ոչ միայն գրավել այլ նաև ավերել այդ երբեմնի հզոր անպարտելի, անմատչելի հայոց արքայանիստ նստավայրը:

Այսօր այս պահին, երբ սահմանին ընկնում են մեր քաջարի տղերքը՝

Ամեն մեկը մի տան ճրագ

Ամեն մեկը մի մոր որդի

Ամեն մեկը մի աղջկա

Երազանքը անապական

Կնոջ սերը, հոր՝ ապագան

Ամեն մեկը անգիր մի վեպ

Ամեն մեկը անգին մի կյանք

Բայց այս անգին կյանքերը երևի սնվել են Գարեգին Նժդեհի թևավոր խոսքերից մեկով. <<Չկա կյանք ազգին ու հայրենիքին պարգևելու չափ մեծ երջանկություն>> Մեր պատմությունը սկսած էպոսից գանձերի, թևավոր մտքերի շտեմարան է, որով դարեր շարունակ ոչ միայն ապրել ու պայքարել են մեր հերոսները այլ նաև մեր ողջ ժողովուրդը, էպոսում մի արտահայտություն կա մեր ու մանուկ ու բոլոր ժամանակներում, մեր ու մանուկ այս հավաքական ամբողջությունը միշտ կարողացել է մի բռունցք դառնալ գիշատիչ գայլերի ոհմակի դեմ և փրկել հայրենիքի ամեն մի թիզ հողը, ժողովուրդը այն հավաքական ուժն է, որը պետք է վեր դասի հայրենիքը ամեն ինչից, այսինքն ինչպես Գարեգին Նժդեհն է ասում <<Մի ժողովուրդ որի որդիները հավասար չեն օրենքի և մահվան առջև հաղթական հայրենիք չեն ունենա>> այսինքն ժողովուրդը չպետք է հարի ոչ իշխանությանը ոչ էլ՝ ընդդիմությանը, այլ կամավորագրվի ու կանգնի իր զինվորի կողքին, լինի զինվորի ուժն ու նեցուկը, բայց այսօր ցավոք սրտի ժողովուրդը այդպես չի մտածում շատերին թվում է, որ բոլորը կարող են կռվել բացի իրենից, հայրենասիրություն գոռալով, բայց հայրենիքի համար ոչինչ չանող հայը շուտով կարող է կորցնել իր հայրենիքը, միգուցե մեր ազգը մոլորված է, մոռանալով որ միայն միասնությունը կարող է գրավականը դառնալ հաղթանակի, իսկ այն ժողովուրդը, որը չի տեսնում որ իր ապագան վտանգված է պետք է վեր հանել վերջին խաղաթուղթը՝ այսինքն վերադաստիրակությունը: Մի ժողովուրդ, մի ընտանիք գաղափարը միայն կարող է այս օրերին փրկել մեր հայրենիքը, որովհետև գիշատիչները միջազգային հանրության հետ հանդիպումների ժամանակ բարբաջում են խաղաղության մասին, բայց իրականում երախները բացած կուլ են տալիս մեր ծաղիկ սերունդը, իսկ մենք կուրորեն դեռ հավատում ենք որ աշխարհը կարող է մեզ փրկել, բայց եթե մի անգամ ևս անրադառնանք էպոսին կհասկանանք այն թևավոր խոսքի իմաստը, որտեղ ասվում է <<Որ հնարավոր չէ գառին գայլին պահ տալ:>> Եվ ի վերջո մեր ժողովուրդը պետք է մի պարզ ճշմարտություն հասկանա որ միայն զենքով կարելի է հաղթել: Սահմանին կանգնած զինվորը դա հասկացել է ու երբեք չի պարտվել՝ իր կյանքի գնով պահելով հող հայրենին, իսկ եթե տարածքներ է հանձնվել, դա քաղաքական խաղ է գերհզոր տերությունների սեփական շահերի պատճառով:

Գոնե մեր ժողովուրդը կարողանա դա հասկանալ և հայրենիքի շահը գերադասի սեփական շահից և նորից մեջբերենք Նժդեհի խոսքերը <<Չի կարելի օգնել այն ընկածին եթե նրան պակասում է ինքնօգնությամբ ոտքի կանգնելու կամքը>>: Եթե թշնամին կամ գերհզոր տերությունները տեսնում են թե ինչպես այս օրհասական պահին մեր երկրում ներքին խժդժություններ են մենք իրար ենք բզկտում ու մեր զինվորի կողքին լինելու փոխարեն ինչ որ աթոռակռիվ ենք անում իրենք էլ հեռու կանգնած միայն կնայեն ու չեն խառնվի: Պատմության գրեթե ոչ մի ժամանակաշրջանում չի եղել ազգային դավանանք, որ թույլ տա թշնամանք տածի հայը հայի դեմ և հայոց եկեղեցին միշտ եղել է ժողովրդի կողքին ու իր երկրի

հայրենիքի պետականությունը պաշտպանող, բայց այսօր դա էլ է խաթարվել, հայոց եկեղեցին չգիտես ինչու մտել է քաղաքական դաշտ թողնելով իր երկրի շահերը, փոխանակ նա այսօր կամուրջ դառնար իշխանության և ընդդիմության միջև բացատրելով որ այս պահին կարևորը միայն հայրենիքն է ու հայրենիքի շահը ավելի է լարում ներքին քաղաքական իրավիճակը, ինչպես Նժդեհն է ասում <<Հայ եկեղեցին ազգային եկեղեցի է, այն որևէ կուսակցության չի պատկանում ի վերուստ ստեղծված է միայն ազգի շահերը պաշտպանելու համար>>: Մի ժողովուրդ եթե ինքն է որոշում որ պետք է ծնվի ապրի ու մեռնի միայն շղթաների մեջ դրա մեղավորը միայն ինքն է, որովհետև դեռ էպոսից սկսած ոչ մի հերոս չէր հանդուրժում որևէ կապանք, ազատատենչ լինելու, ազատ հայրենիքում ապրելու գաղափարը մեր ժողովուրդը էպոսից է ժառանգել, յուրաքանչյուր հերոս Սանասարից սկսած մինչև Սասունցի Դավիթը ոչ միայն իրենք են ձգտել ազատ ապրել այլ նաև իրենց ժողովրդին են ազատության մեջ պահել և ստիպել արաբ զավթիչներին երկար ժամանակ հեռու մնալ իրենց հայրենիքից: Չկա աշխարհում գրեթե մի ցեղ որ չի զգացել հայի բազկի ուժը նորից Նժդեհի թևավոր խոսքն է <<Բայց այսօր այս ազգը չգիտես ինչու է վախենում և թույլ է տալիս որ օտարները իր փոխարեն որոշում կայացնեն, բայց հայը երբ սկսի վախենալ մահվանից այդ օրվանից թույլ կտա որ Հայաստանում օտարը թագավորի, բայց մենք շատ ենք կորցրել երևի թե այս պահին էլ կորցնելու ոչինչ չունենք, մենք էլ պետք է սթափվենք և ինչպես մեր թշնամին մինչև ատամները զինվենք ու տանք հային արժանի հակահարված, այստեղ տեղին է նորից հիշել Նժդեհի խոսքերը <<Ոմանք արևը միայն խավարման ժամանակ են նկատում>> իսկ մեր ժողովուրդը իրավունք չունի այդքան ուշ նկատելու արևի խավարումը, որովհետև դա կլինի մեր պետականության ու անկախության վերջը: Վերջին շրջանում շահարկվող մի միտք, մենք կարող ենք թուրքի հետ բարեկամանալ, կամ ներել նրան: Այս հարցին շատ հանճարներ են անդրադարձել և կա համընդհանուր մի կարծիք. <<Մի օր հայը պետք է ների թուրքին, բայց ոչ ծնկի գալով, այլ երբ կլինի նրան հավասար և կստիպի իր հետ հաշվի նստել ու խոսել ինչպես հավասարը հավասարի հետ>>:

Իսկ ազգային ինչ արժեհամակարգ ձևավորվեց այսքան ասածի հետևանքով

Իզուր չէ էպոսին այսքան տեղ հատկացվում դպրոցում: Էպոսը այն գնահատելի հարստությունն է որով դարեր շարունակ դաստիրակվում են մեր սերունդները, միգուցե յասօր անընդհատ հայրենասիրություն, ազգասիրություն, ազնվություն, բարություն սովորեցնելը հայ մատաղ սերնդին այդքան էլ ճիշտ չէ, որովհետև մեր սահմաններին թուրք բարբարոսները փորձում են արմատախիլ անել մեր երիտասարդությանը, ջնջել հայկական հոգևոր հետքը և եթե մենք մնանք նույն բարի ու ազնիվ հայի տեսակը կկորցնենք մեր հայրենիքը մենք էլ պետք է լինենք չար նենգ ու դավադիր ու թշնամու հետ խոսենք իր լեզվով, բայց հայրենասիրությունն ու ազգապահպանությունը պետք է լինի յուրաքանչյուր հայ ուսուցչի առաքելությունը և եթե մենք կարողանանք այնպես բացատրել էպոսը, որ դաստիրակենք այն Նարեկներին որոնք պատրաստ են անգամ փայտե թրով կտրել թշնամու վիզը կնշանակի որ մենք ձևավորել ենք ազգային արժեհամակարգ, քանի որ մեր թշնամիները չեն պակասում այլ միայն ավելանում են ուրեմն այսօր մեր հանրապետության բոլոր դպրոցներում ու բոլոր առարկաների ուսուցիչները ամեն վարկյան շեշտը պետք է դնեն միայն ու միայն հայրենասիրության գաղափարին և ես համոզված եմ որ բոլորիս միահամուռ ջանքերի շնորհիվ գուցե մի օր հաստատվի երկարատև խաղաղություն և Արցախում և Հայաստանում յուրաքանչյուր հայի համար օրը բացվի բարի խաղաղ ու լուսավոր; Ոչ մի մանուկ այլևս վախով չի արթնանա կամ արկերի պայթյունի տակ չի սերտի Սասունցի Դավիթ էպոսը, ոչ մի զինվորի երազանք չի մնա անկատար և մեր երկրում կքչանան սևազգեստ մայրերը, և մենք այլևս ստիպված չենք լինի էպոսի ամեն մի կերպարի միջոցով բարձրացնելու մեր ազգապահպանության հարցը և խնդրելու մեր ժողովրդին զերծ մնալու քաղաքական շահարկումներից որովհետև դրանով ջուր է լցնում թշնամու ջրաղացին և տուրք է տալիս նրա ծավալապաշտական նկրտումներին:

Հետազոտական աշխատանքս ավարտեմ միայն նշելով թե անկախ ժամանակաշրջանից անկախ մեր ունեցած խնդիրներից էպոսը չափազանց սիրված է ժողովրդի կողմից, շատ հատվածներ ոչ միայն անգիր են ասվում այլ նաև երգվում են: Էպոսը մշակվել է Հովհաննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի և Եղիշե Չարենցի կողմից:

Օգտագործված գրականության ցանկ

Բուն Սասնա Ծռեր էպոսը՝ Գարեգին Սրվանձտյանի

Մանուկ Աբեղյանի տարբերակները

Թումանյանի և մյուսների մշակումները

9-րդ և 10-րդ դասարանների դասագրքերը